

6741

631.3

U-15

2011

182002

33
5

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽՈՍԵԱՆ

ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԱԼՒՈՍԸ

Ա. ՄԱՍ

ԴԱՇՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ԱՐՏԱՏՊԱԿ

«Ազգագրական Հանդիսից»



Թ Ի Փ Լ Ի Ս

Պատրիարքական Գրատնայի | Типография М. Д. Ротинянца,
Голов. пр., д. № 41.
1898

631.3

Ս-15

42

152

630
70-ՍԱ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԽՈՍԵԱՆ

ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԱԼՔՈՍԸ

Ա. ՄԱՍ

ԴԱՇՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Дорожно-железнодорожное издательство, Тифлис, 1908 год.

Ա Ր Տ Ա Տ Պ Ա Ն

«Ազգագրական Հանդիսից»



Թ ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի || Типография М. Д. Ротинянца,
Голов. пр., д. № 41.
1898

16856

ՏՄՈՒԴՆԱ ԴԻՎՈՋՆՈՐ ՏՄԻ

Дозволено цензурою. Тифлисъ, 21 Сентября 1898 года.

ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԱԼՒՐՍԸ

Մի-երկրորդ խօսք

Կամենալով հայ գիւղացու ամբողջ կեանքն իւր ստացուած քով նկարել ու նկարագրել՝ աշխատութեանս համար նիւթ ընտրեցի Ջաւախքը: Այս անգամ ամիտի կերպով ամբողջացրած տալով հասարակութեանը, մանաւանդ ազգագրագէտներին, միմիայն մի մասը «ԴԱՇՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ», կաշխատեմ այսուհետեւ տալ և միւս մասերն, ինչպէս՝ անաչին գործիքները, արհեստական գործիքները, ամանեղէնները, կարասիները, շորերն ու զանազան տեսարաններ գիւղական կեանքից, իւրաքանչիւր մասն ամիտի, ամբողջացրած:

Այնտեղ, ուր հարկաւոր եղաւ չիչեցի և Շիրակի ու Ախալցխայի գաւառի մասին, որոնց տարբերութիւնը Ջաւախքից գրեթէ ոչինչ է: Գործիքների անունները գրական լեզուով են. մօտին գրած է և ժողովրդականը *):

ՄԻՔԱՆԻ ԽՅՔ ԶԱՆԵՔԻ ԳԱՇՏԱՅԻՆ ԳԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I.

Յ Ա Ն Ո Յ

Երբ անց են կենում ձմեռային երկար ամիսները, հարաւային հողմերը փչում, հալեցնում են սառած երկրի երեսը, վարնան գունները բացում են ամեն կողմից՝ գիւղացին դուրս է հանում գոմից իւր գրաստներին, տանում ձիւնի ջրերից խոխոջացող մօտակա

*) Ժ. ժողովրդական, թ. թուրքերէն, ա. արչին, վ. վերջի

առուակը ջրում, խամից հանում. մի քանի օրից, երբ տաքութիւնն ընկնում է գետին, դուրս է հանում 5 ամիս գոմում փակուած գոմէշներին, բակում *) ճակատներին մի-մի կարմիր ձու տրաքացնում, լուծը դնում ուսերին և դուրս հանում: Հինգ ամիս կապուած, լոյս չտեսած, վայրենացած գոմէշները քիթը քամի մտած գիժ հորթի նման չափս ընկնելով վազում են դէս ու դէն, մինչև լոգնիլները, խամալները. **) ապա տէրն առաջ է խառնում նրանց, ձիպտը ձեռին քշում տուն, լուծը թողնում, ցաւած ոտքերին աղաջուր անում, տրորում, չիւում, խամից հանում և լծելու համար պատրաստում:

Գրաստներին աղալէս վարժեցնելու հետ միասին գիւղացին միւս կողմից, շինում կամ նորոգում-կարկատում է իւր գործիքները:

Եւ երբ ամեն բան պատրաստ է՝ նա առնում է սերմնացուն, գնում գիւղի էրէցի մօտ, գլխարկը հանում, չոքում օրհնել տալիս, բերում, խառնում ամբարում եղած հացահատիկին. ապա բառնում կոռնի սալին արօրները, ջուալով սերմնացու հատիկը, գրաստները պաշար խուրձով խոտն՝ առաւօտ վաղ գնում դաշտ: Արտում մաճկալը սերմնացանը գործը չսկսած չոքում է Ամենակալի առաջ սրտաբուղիս աղօթում, խնդրում Նրա աջակցութիւնը, Տիրամօր միջնորդութիւնն, իւր հատիկն ու դարձը Նրան լանձնում, ապա դոգնոցի պէս կապում դաստառակը մէջքից, սերմնացուն լցնում մէջը, ցանում: Բայց նախ քան ցանելը, նա արտը բաժանում է կորիների, (մարգերի), որ ցանելու համար հեշտութիւն լինի, և ապա աչնուհետ սկսում է վարել արտը.— լծում է արօրները, մաճից ինքը բռնում, հօտաղին նստեցնում հորիկի ուսին ու «գործը» սկսում արտի մի լարմարաւոր ականջից:

Վարում է մինչև կէսօր, կամ ինչպէս իրենք են ասում՝ ցորեկ դառնալը. կէսօրին թողնում է գրաստներին, խօտը դնում առաջները, կերակրում, ապա մօտիկ առուակը տանում ջրում, քիչ էլ հանգիստ տալիս, ու նորից լծում. վարում է մինչև արևի մայր մտնիլը. արևը մայր մտնելիս նա թողնում է, արօրները գցում եզներին ուսին հակառակ կողմով, գալիս է տուն, գիշերը կենդանիներին մինչև լոյս կերակրում (2 անգամ, մէկ երեկոյեան, մէկ էլ առաւօտեան շատ վաղ), ու նորից գնում արտը:

Այսպէս շարունակում է վարել մինչև ցանքի վերջանալը: Ինքըստինքեան, այն տեղերը, որ դաշտավայր են, աւելի շուտ են

*) Բակ ասում են Զաւախքում նախասենեակին:
**) Երբ երկար ման չգալուց շատ են ման գալիս և ոտքերին ցաւ զգում՝ դրան ասում են խամալ:

սկսում ցանքն և աւելի շուտ էլ վերջացնում. իսկ այն տեղերը, ուր լեռնային է՝ աւելի ուշ. սովորաբար ցանքն սկսում է մարտի 15-ից, տևում մինչև մայիսի 15-ը, երկու ամիս:

Այն արտերը, որ աւելի բարձր դիրք ունին և ցուրտ կլիմայ՝ ցանում են գարի, իսկ այն արտերը, որ աւելի ցածր դիրք ունին և տաք կլիմայ՝ ցանում են ցորեն. բաղի այդ հերկերը ¹⁾ գրեթէ բոլորն էլ ցանում են ցորեն, խողանները ²⁾ գարի. այդ առաւելութիւնը ցորենին տալիս են նրա համար, որովհետև նա աւելի տաք կլիմայ և սարարտ հող է պահանջում:

Ցորենն աւելի առաջ են ցանում քան գարին. սակայն գարին աւելի շուտ է հասնում՝ քան ցորենը ³⁾:

Երբ վերջանում է գարու ու ցորենի ցանքը՝ ցանում են կտաւ — հատն ու լամիկը:

Կտաւհատից ստանում են ձէթ և գոմէշների համար ձմեռուայ կոպտոն ⁴⁾, իսկ լամիկից ձէթ (աւելի ընտիր, քան կտաւհատի ձէթը), քիչ էլ կոպտոն, բայց ամենակարևորը՝ աւել. այդ աւելներով գիւղացիք տարին-տասներկու ամիս աւելում, մաքրում են իրենց տունն ու դուռը: Աւելը դուրս է գալիս լամիկի ցօղունից ⁵⁾:

Կտաւհատն ու լամիկը չնայելով, որ ամենից ուշ են ցանում, սակայն ամենից շուտ նրանք են հասնում:

Զաւախքում աչնանացան չկալ, որովհետև ձմեռը խիստ ցուրտ է լինում և սառնամանիքը հասնում է գետնի խորքը, որն սերմնացու հատիկը մրտում, փճանում է:

Որովհետև Զաւախքի արտերը ջրաբեր չեն, և ամառն էլ շատ

1) Հերկ կոչում է այն արտը, որ մի տարի առաջ լունիս-լուսին ամսին հերկում, պատրաստում են միւս տարուան ցանելու համար:

2) Խողան այն արտն է, որ 1-2 տարի ցանուել է, էլի ցանուում է առանց հանգիստ տալու:

3) Այդ նմանութեամբ մի փոխաբերական դարձուածք կայ, որ աղջկայ շուտ հասնելու և տղայի ուշ հասնելու համար ասում են, «աղջիկը որ կայ՝ գարի է»:

4) Երբ կտաւհատի հատիկներից հանում են ձիթահանքում ձէթ՝ նրանից մնացած բուսական մասը կոչում է կոպտոն:

5) Երբ լամիկի արտն հասնում է, արտի տէրը իմաց է տալիս իւր մօտիկ բարեկամներին, որ գնան աւել քաղելու. կանայք վաղ հաւաքում են արտը, և սկսում արմատից ամբողջովին հանել ցօղունը հատիկներով: Այդ ցօղունները խուրձ կապած մինչև աշուն չորացնում են. ապա աչնանը սղկում են (ծեծում են) թակերով, (փայտ, որով բուրդն են թակում լուանալիս), հատիկը ցօղունից բաժանում, արտի տիրոջը տալիս, իսկ ցօղունն իրենց համար աւել կապում:

լաճախ երաշտ է պատահում՝ այդ պատճառով նախ քան վարելը ցանում են, որ վարելու ժամանակ հատիկը զլորուի, ախօսի մէջ աւելի խոր թաղուի, երաշտից չփնասուի:

Երբ արտը ցանում-վարում են՝ նրա երեսի կոշտերը խորդու բորդը, դերբուկները հարթացնելու համար լծում են տափանը, վրան միքանի հողով կանգնում, որ աւելի ծանր լինի, և հարթացնում-տափնում են արտը:

Արտը տափնելուց լետու նրա երեսին մնացած քարերը հաւաքում են, դարսում արտի մէջ միքանի տեղ, որ կոչւում է ղոռդ: Զաւախքում շատ քիչ արտ կայ, որ քարից ու ղոռդից ազատ լինի:

Մեծ ընտանիքները ցանում են 30-50 սումար *), (գարի և ցորեն միասին). միջակները 10-20, իսկ աղքատները՝ 1-4 սումար հազիւ:

Չնայելով Զաւախքում այդքան շատ են ցանում՝ սակայն այնքան չեն ստանում, որքան Շիրակում: Շիրակում մէկին ստանում են առնուազը 5. սովորաբար 6-8ը. իսկ այստեղ մէկին՝ 3-4, առատ տարին մինչև 5. Երբեմն այնպէս է պատահում, որ մէկին հազիւ է ստացւում 2:

Պողաբերութեան այդպէս սակաւ լինելն ունի իւր պատճառները. նախ ինքը հողը, որ միմիայն սև չիւրտ է, ոչինչ կաւալին մաս չունի մէջը, երկրորդ երկրի ցրտութիւնն է, որ չի կարող բոյսը լաւ հասնիլ, երրորդ հողի ոյժից ընկնելն է և վատ մշակութիւնը. ուղիղ 70 տարի է, ինչ կարնից (Բասէնից) գաղթած ժողովուրդը միենոյն կերպով վարում է հա վարում, առանց հանգիստ տալու և պարարտացնելու. չորրորդ, երաշտն ու շատ անգամ էլ բարնանային սաստիկ չորդ անձրևներն են, որ հատիկը խեղդում-փտեցնում են հողի մէջ. հինգերորդ, վերջապէս սերմի չփոփոխելը. երկիրը սիրել է սերմը թէ ոչ, սերմը լաւն է, առողջ է, թէ ոչ՝ դրան նշանակութիւն դեռ չեն տուել, դեռ չեն մտածել, միշտ մրենոյն սերմն են ցանում, մինչդեռ փորձուած է, որ փոփոխած (օրինակ Չլղըրից կամ Շիրակից բերած) սերմն երբ ցանել են աւելի լաւ պտուղ են ստացել:

Մինչդեռ մէկ կողմից արտերն ուժասպառ մնում են՝ միւս կողմից հայ գիւղերն աղբերի դէղերի մէջ խեղդւում են. նրանք միմիայն աղբում պարարտացնում են մօտակալ արտերը, որոնք կոչւում են աղբին:

*) Մի սումարը 16 կոգ է. ցորենի կոգը 50 ֆ. է, գարու կոգը 40 ֆ.

Բացի այդ պատճառներից կան բնութեան արձաւիրքները, որ քիչ չեն լացացնում աշխատաւոր հայ-գեղջուկին:

Գրանք են երաշտը, մուկը, կարկուտը, եղեամբը, որդը, և մորեխը:

Շատ անգամ ամառը չաքաթներով երկինքը կապում է, անձրևի կաթիլ ներքև չի ընկնում, ցանքսը կարճ մնում, տեղն ու տեղը ոչնչանում է. և եթէ ժամանակն անցնելուց լետու անձրև էլ գայ՝ նշանակութիւն չի ունենայ, քանի որ արդէն բոյսի հատերն ամրացած են լինում:

Մուկը, որ լաճախ անթիւ քանակութեամբ առաջ է գալիս արտերում, կտրում ոչնչացնում է ողջ ցանքսը, հասկերը կրում գետնի տակի ծակերը լցնում, հաշանը կտրատում անպէտք դարձնում. լինում են այնպիսի արտեր, որ ամենեին տէրը մօտ չի գնում, որովհետև մնացած մասը գերանդի չի բռնում:

Կարկուտը օգոստոսի վերջերին, Աստուածածնայ տօնի մօտերքը միքանի ժամում խփում, տանում է ողջ ցանքը:

Իսկ այն տարիները, որ աշնանային եղեամբներն ամառուանից են իջնում՝ բոլոր ցանքը, մանաւանդ սարոտ տեղերում, մրսեցնում, խոտ են դարձնում:

Այս պատահարների դէմ գիւղացին ոչինչ հնար չունի. ոչ փոխադարձ ապահովող ընկերութիւն կայ, ոչ արտերն ապահովցնել կայ, ոչ էլ մկան դէմ դեղ գործ ածել կայ:

Գիւղացու միջոցն իւր աղօթքն ու երկրպագութիւնն է. երբ երաշտը երկար է տևում, գիւղում ժողովարարութիւն են անում, մատաղ անում, աղքատ-ուքատին բաժանում. կամ խաչ ու աւետարան, Տիրամօր պատկերն ու խաչվառը դուրս հանում, թափօր կատարում:

Շատ անգամ էլ գնում են թուրքերի գոռերը քանդում, ամբողջ կմախք, կամ զանգ դուրս հանում, տանում ջուրը գցում, որ անձրև գայ:

Պատմում են, իբր թէ երաշտի առաջ գալը «գիւր-անելուց է»: Հարուստ սովորաբարներ, որոնք ահագին քանակութեամբ շտեմարանած հաց են ունենում՝ թուրք մուլլայի, կամ դէվրիշի գիր են անել տալիս, դնում իշու ծնօտի կամ գանգի մէջ, այդ գանգը դնում ծառի կատարին. այդտեղից իշու չանէն սկսում է մարդկանց համար անլսելի ձայնով դռալ, երկինքը կապել. ճարպիկ մարդիկ գանում են չանէն, ջուրը գցում, միջի գիրն այրում, երկինքը կապանքից արձակում:

Բնութեան պատահարներից ամենասակաւ պատահողը մորեխն է. մորեխն այստեղ երբեք չի կարող աճիլ. որովհետև նա իւր ձուած

բառնալը ահագին ժամանակ է խլում, բացի այդ՝ առաւօտ շատ վաղ լծում են, երեկոյեան շատ ուշ թողնում:

Հերկելու ժամանակամիջոցն ընդհանրապէս կոչում է հերկոց-իսկ գութանի հերկի վերաբերմամբ մասնաւորապէս՝ «գութնոց»:

Գութանաւորի մէջ ամենապատուաւոր տեղը բռնում է մաճկալը, նրան են հնազանդում ու հպատակում բոլորը, նրա կարգադրութեամբ են լծում ու թողնում, նրա թելադրութեամբ են հօտաղները գիւղից գառ ու հաւ գողանում, գութանը (արտը) տանում, մորթում, ուտում:

Ոչ մի ժամանակ երկրագործի կեանքը դաշտում (պարապմունքի ժամանակ) այնքան ուրախ չէ՝ որքան գութնոցին: Գութնոցը գիւղական հովուերգութիւնն է. այնտեղ ասում են խողեր, սրախօսութիւններ, հանելուկներ, հօրովէլներ, և այլն. գութնոցին, ամբողջ ժամանակ հօտաղների բերանից հօրովէլն անպակաս է և կասես գրաստներն զուարթացած հօրովէլից աւելի սիրով են քաշում լուծը:

Հօրովէլները խիստ համեմուած են լինում զանազան այլաբանական կամ ուղղական սրախօսութիւններով:

Օր. հէնց որ մի նորատի հարս կամ ջահէլ աղջիկ է անց կենում՝ իսկոյն սկսում են.

«Ալ է, ապաւոր է'է'է'»,

«Կալ է կապաւոր է.

«Ըռ ջիկ է, գըռ ջիկ է,

«Ինքը դըմբըռ ջիկ է,

«Մեր մաճկլին

«Գրկելու խարճիկ է,

«Հօ'տաղ, հօ'օ'օ'...»

Կամ թէ չէ.

«Գութանն ընկաւ փոսը'ը'ը',

«Շաղը զարկեց ախօսը.

«Ալ կապաւոր աղջիկ,

«Գամ կուշտդ կանգնեմ,

«Թչերդ պագնեմ,

«Հօ'տաղ, հօ'օ'օ'...»

Սե ում համար ասէք, որ սեռի ու դասակարգի համար ասէք, որ չարածճի հօտաղները հիւսած չունենան ազգային այդ թէև ավիեղ-ցիկեղ բաց համով-հոտով հօրովէլները:

Եթէ պատահում է, որ գութանը հերկում է ճանապարհի վրայի արտ՝ ճանապարհորդի առաջ կտրում են հօտաղները գութանը:

դուրս եկած ժամանակ և մինչև նուէր չեն ստանում, գութանը ճանապարհից չեն հեռացնում:

Հերկոցը դեռ չվերջացած՝ վրայ է հասնում, խոտհարը, կամ ինչպէս իրենք են ասում չայիրոցը:

Այն գիւղերը, որոնք չայիր ունին՝ նախ քան հունձը բաժանում են մասերի, ապա վիճակ ձգում, ու սկսում հնձել: «Գերընդուոր տղամարդիկը» շարում են չայիրի երկարութեամբ ու լայնութեամբ, տակից այնպէս մաքուր հնձում դեռ չհասած խոտը, որ կասես մկրատով խուզած լինի:

Խոտը հնձելուց լետոյ (ինչպէս գարին ու ցորենն են անում) անմիջապէս չեն հաւաքում, այլ լասերը թողնում են մի քանի օր արևի տակ չորանալու, ապա հաւաքում, կազմում են կոպնաներ (КОПНА), այդ կոպնանեներից պարան գցում եղներով քաշում մի տեղ՝ եղըներ դնում: Սև երբ բոլոր հունձը վերջանում է՝ լծում են որանի սայլերը, խոտը կրում խոտնոցը, թալա (թ.) (մեծ, երկարասև շէջ) դնում, վրէն կտուրածն շինում, քարերով պնդացնում, որ քամին չտանի, անձրևը մէջը չանցնի:

Չայիրոցի ժամանակամիջոցում հնձում են և այն արօրները, որ խոտ է բսած լինում:

Մօտենում է քաղը. այդ ժամանակը գիւղացու այնպիսի ծանր ժամանակն է, որ նա գլխեր-ցերեկ հանգիստ չունի, քունը նրա համար բառիս բռն նշանակութեամբ մի իղիալ է. իրենք ասում են. «Կսման ժամանակ մարդ քիչ կմնայ, թէ մեռելը տեղէն հանէ, դատեցնէ» (աշխատացնել):

III.

Ք Ա Ղ Ո Յ

Չայիրոցը դեռ չվերջացած վրայ է հասնում քաղը կամ քաղոցը: Գիւղացին լծում է սայլը, վրան նստացնում իւր հարսին, աղջկան, մեծին ու փոքրին և տանում արտը: Գիւղում մնում են միմիայն խապուխաս անող կանայք, ծերերն ու պառաները:

Նրիտասարդը պսպղուն գերանդին ձեռն առած հնձում է, պատանին եղանը ձեռում քաղած լասը հաւաքում, եղան անում, փուլու է շինում, իսկ սրանց ետևից ջահիլ աղջիկն ու մանկամարդ կիներ, կամ ծերունին փոցխ են անում:

Հնձում են մինչև ժամը 8-ը կամ 9-ը, նստում մի փոքր նախա-

ճաշ են անում, նորից հնձում են մինչև կէս օր, ահա գալիս է արտի հացը, որ կամ տունը մնացած ձերուներն ձիուն բարձած է բերում, կամ արտից մի զոյգ եզ են տանում, խուրջինով («հացը») գցում ուսերին բերում, կամ ինքը տանտիկինը ուսած տանում է: Հաւաքում են հացի շուրջը, «ճօտաղ նստում» *), ախորժակով ուտում բրդած ապուրը, ապա մածուկը ջրխընում (այսինքն ջրախառն անում), բրդում, խղմեցնում, զգալներն առնում, ընկնում ջանին. վերջը պանիր-հացով կերածները կնքում, կուշտ ջուրը վրէն խմում, պառկում փուլողների կամ եղընների տակ մի ժամի չափ հանգստանում, ու նորից աշխատում: Երեկոյեան սալը լծած, փոցին ու եղանը, կէտերն ու կուժը վրէն բարձած գալիս են տուն, ընթրիքը վայելում, ժամը 9-ին պառկում քնելու, միւս առաւօտ 3 կամ 4 ժամին վաղ վեր կենալու:

Այսպէս շարունակում է մինչև հնձի վերջանալը:

Որպէսզի սովորական տրեխները չչորանան երաշտից և նրանց սաքերը չսեղմեն, չցաւեցնեն՝ քաղցի համար լատկապէս աղաջուրը դնում պատրաստում են տրեխացու կաշի, որ կոչւում է հասրը: Այդ կաշին աղաջրից հանելուց լետոյ փափկացնում են իւղով ու ճարպով, աւելի սըմառւամա (լաւ) կարում, հագնում, որը իսկի չէ չորանում:

Արտը հնձելուց լետոյ կոչւում է խողան:

IV.

Կ Ա Ղ Ո Յ

Քաղցը վերջանալու պէս սկսում է կալցը:

Նախ քան կալն սկսելը՝ կալի տեղը չարդում են (դարման փուում), մի-երկու շաբաթ թողնում, մինչ չարդի գետնին կաշիւը, ապա որանի սալերը լծած գարին ու ցորենը բերում կալն են թափում, կալ անում, լծում են կամերը քշում, մանրացնում կոլորած փռած որանի երեսը. երբ վերի երեսը մանրում է, եղանով շուռ են տալիս միւս երեսը. այդ էլ երբ մանրում է՝ նոր մէկից են

*) Հօտաղ նստել ասում են շրջանաձև նստած դրութեան. նստողները աջ ծունկը ծռում դնում են ձախի տակ, ձախ ոտքը դէպի դուրս մեկնում, ձախ ձեռք կախած պահում, աջ ձեռով ուտում. միւսն էլ նստում է առաջինի ծնկի ու ոտի առջև:

շուռ տալիս, և սա այնքան է կրկնում, մինչև որանը մանրում է, այլ ևս եղանի չի գալիս. մի քանի անգամ էլ դարձնում են կալի-թիով, ապա երբ կալը կատարեալ մանրում է՝ լծում են կապտոնը, քաշում թեղ անում: Կապտոնի կամ կալքաշի տակի մնացածը ցախաւելով աւելում են հարսներն ու աղջկները. այդպիսով բոլոր կալը թեղ են շինում և նոր կալ ձգում:

Երբ թեղին հակառակ ուղղութեամբ փչում է քամին՝ գիւղացին առնում է հօսելին ձեռը, մալամէն (դարմանն ու հատիկը իրար հետ խառն) տալիս է քամուն. քամին չարդը տանում է, հատիկը ներքև թողնում. այսպիսով գիւղացին բաժանում է հատիկը չարդից, շեղջ կալմում, որ կոչւում է թէճ: Յետոյ առնում է թէճի-թին, էրնում է թէճը, չարդի մանրունքը, փոշին կամ, ինչպէս իրենք են առում, մղեղը ջուրում է հատից. ապա կանչում հարս ու աղջկան. նրանք խախալները (մաղի տեսակ) ձեռներին կանգնում են թէճի կողքին, մաղում բոլոր թէճը, մաքուր հացահատիկ ստանում: Այդ հացահատիկը լցնում են ջուրալները, կրում ամբարը:

Այդ կերպ ձեծում են երկրորդ կալը, երրորդ կալը... մինչև վերջանալը. կալ կալ, որ մինչև 10 սալ որանից է լինում, կալ էլ կալ՝ 1-2 սալ:

Գարին աւելի շուռ է մանրում քան ցորենը. այդ նրա ծղնօտի աւելի թուլ լինելուց է:

Մաղելուց ու էրնելուց լետոյ ստացում են չծեծուած հասկեր. այդ չծեծուած, չմանրեցրած հասկերը հաւաքում են մի տեղ, որ կոչւում է ծանծ:

Երբ բոլոր կալը վերջանում է՝ նոր են ծանծը ձեծում. դարու ծանծն առանձին, ցորենի ծանծն առանձին:

Ծեծում են կամով. իւրաքանչիւր կամին լծում են մի զոյգ եզ: Այժմ սովորութիւն է մտել կենտուկունա լծում են ձիեր. ձիերը ոչ միայն կամով են մանրացնում, այլ և իրենց պապտերով, արոփող սաքերով. մի զոյգ ձին կատարում է 4 լուծք եղան գործ:

Գիւղացու մեծ ձգնածամբ կալցի ժամանակ անձրև գալն է. հէնց որ թխում են ամպերը՝ ձեր, մանուկ, աղջիկ, տղալ, ալը, կին, բոլորը մըջիւնի նման թափում են կալը, կամերը դուրս հանում, կալը հաւաքում, փոքրիկ դէզեր կաղմում, որ անձրևի տակ մնալուց չթրջի, հատիկը չծլի, չփճանայ:

Կտաւհատը ձեծում են ոչ թէ կամով՝ այլ սալերով. սալի ծանրութիւնից նրա հատիկը թափում է ներքև, վերևը մնում է ճականը (ցողունը):

Այդ ճականը տալիս են կենդանիներին ուտելու. կամ երբ տուն են շինում, գերանների վրայ դարսած մարդակների ու բարակ

սալերի վրայ փռում, որ հողն ածեն, ծածկեն: Հականն այդ դէպքում աւելի դիմացկուն է, քան խոտը, կամ դընդըրէն *):

Կամերը քշում են մինչև կէսօր, կէս օրին եզներին արձակում, տանում են ջրում, ապա նորից լծում:

Կամ լծուած եզներն ամբողջ օրը քթերը ներս կոխած կալի տակը ուտում են հատիկը, կամ ինչպէս իրենք են ասում՝ վեր են խմում:

Իւրաքանչիւր եզ օրէնն ամենասակաւը կուտէ 1/2 պուդ հացահատիկ, տասը դուգը 10 պուդ. սա մի օրում, ամբողջ կալոցի ընթացքում, որ 20—40 օր է տևում, այդքան անգամ շատ: Այդ կորուստն աչքի առաջ ունենալով՝ Շիրակում և Ախալցխայի գաւառում եզները դնչերը կապում են. դրա փոխարէն նրանց կերակուր են տալիս ցերեկն արձակած ժամանակ:

Կալն սկսում է սեպտեմբերի սկզբներից, վատ եղանակների պատճառով երբեմն տևում է մինչև հոկտեմբերի վերջը:

Շատ անգամ էլ պատահում է, որ ձմեռը շուտ վրայ հասնելով՝ որանի մի մասը մնում է ձեծուելու:

Յարդը մարագ են կրում քթոցով. մի կալի քթոցը կտանի 3—4 պուդ. կալատէրը քթոցը շալակած տանում է մարագի կտուրը, երթկից ներս ածում **):

Կենդանիներին, Ջաւախքում, կալոցին գիշերները ներս են անում մարագը. նրանք այնտեղ թէ ողջ գիշերը դարմանն ուտում են և թէ կոխտում նստացնում:

Գեռ չլծուած, խամ արջառներին վարժեցնում են կալոցին. լծի մի կողմում լծում են մեծ եզ, միւսում նոր, լուծ չտեսած արջառը. սկզբից նա վեր-վեր է ընկնում, լուծը շուտ տալիս, փախչում, սամիները կտորատում, սակայն երկար չարչարանքից քետոյ հնազանդում է ճակատագրին. մի շաբաթից արդէն նա լծելու կանոնաւոր արջառ է:

Կալ ու կուտն այդ կերպ հաւաքելուց, ներս առնելուց քետոյ, ձմեռը գալուն պէս գիւղացին ներս է քաշում իւր տունն ու բունը, անդործութեան մատնում մինչև միւս գարնան բացուիլը:

*) Խոտի վատ տեսակը:

***) Շիրակում չարդը մարագ քաշում են կապտոնով. նրանք մարագների դռները, որ աւելի մեծ են քան Ջաւախքինը, բաց են անում, լծում եզներն և դարմանը կալքաշով առնում ներս:

ԴԱՇՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԲԵԺԱՆՄՈՒՆՔԸ

Ա. ՎԱՐԵԼՈՒ, ՀԱՐԹԵԼՈՒ և ՀԵՐԿԵԼՈՒ

Արօր նկ. I, գուլթան նկ. II, արօնայ նկ. III, ջղլա (թ.) նկ. III, փոցխ *) (վարեղու) նկ. IV, տափան նկ. IV:

Բ. ՀՆՁՆԵԼՈՒ և ՀԱՒԱՔԵԼՈՒ

Գերանդի նկ. X, մանդաղ նկ. X, եղաններ նկ. IX, փոցխ նկ. IX, կէտեր նկ. IX:

Գ. ԿՐԵԼՈՒ

Կոռնի սալ նկ. V, որանի սալ նկ. VI, սահնակ նկ. VIII:

Դ. ԿԱԼՍԵԼՈՒ

Կամ նկ. X, կալի-թի նկ. IX, եղաններ նկ. IX, կապտոն նկ. IX, ցախաւել նկ. X, թէճի-թի նկ. IX, հոսելի նկ. IX, մաղ նկ. X, կոտ նկ. X, ջուալ, քթոց:

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ.

- I. Արօր, կանուխ, սարկաւ, գործնոր, արօրի խոփ, արօրը լորխած լծին, չորոցի շղթայ, հոտաղի սանդուխ: Արօնայի մասը (սխալմամբ այստեղ ընկած արտանկարելիս):
- II. Գուլթան, սրբիչ, գուլթանը գոռնելին կապելու շղթայ (ջանբարէկ թ.), գուլթանի գոռնէլ, գուլթանը կապած գոռնէլին, գուլթանի խոփ:
- III. Արօնայ կամ չարնայ կամ անկջով արօր, ջղլա (թ.) երկու տեսակ դմակով՝ չաթալ և լայն:

*) Նկարներում սխալմամբ գրած է փոցղ:

Ձև 16. նկ. I.

Սոյն 16 ձևով ցոյց տուած, թէ ինչպէս են արօրը լորխում լծին և կապում հորիկի շղթան:

Ա. Գուլթան. նկար II.

Գուլթանը հերկելու ամենակարևոր գործիքն է. երբ արտը խլատ ամբացած է լինում, կամ հարկաւոր է կուտական հողը (խամ թ.) վարել արտ դարձնելու համար, որի մէջ լիքն են լինում իրար հետ հիւսուած խոտերի արմատներ, գործ են ածում գուլթանը, որի համար արօրն անզօր է:

Գուլթանն արօրից աւելի խոր է փորում:

Արօրը միմիայն պատուում է գետինը, իսկ գուլթանը հողի շերտն ամբողջովին դարձնում է հակառակ կողմի վրայ, մանաւանդ խամ տեղ վարելիս, ուր մի ակօսի ալաւը թ.—շերտը, (չկարատուած հողի զօրը) ծայրէ ի ծայր կազմում է ժապաւէնի նման մի բան, որ հակառակ կողմի վրայ դարձած, պառկած է նախափերջին ակօսի մէջ:

Գուլթանի ձևիչը, որ ուղղահայեաց և փոքր ինչ դէպի առաջ թեքուած դիրք ունի, կտրում է հողը խամ տեղից այնքան, որքան խոփը պէտք է կտրէ, բարձրացնէ տակից հորիզոնական ձևով երկու, միմեանց վրայ դրած 11, 12 տախտակներին (որոնք կոչւում են ալաւ-թախթասի և չիմ-դաւրան, այսինքն ալաւի տախտակ և չիմ դարձնող)։ Վերջիններս հեռացնում են ալաւը փորած ակօսից և պառկեցնում միւս (նախափերջին) ակօսի մէջ:

Գուլթանի հերկի «գործն» սկսում են արտի մէջ տեղից, կամ երկու ավերից: Մէջ տեղից սկսելու համար մաճկալն արտի լայնութիւնը չափում է, թէ քանի ատում (թ.) (մեծ քալը) է, ապա բաժանում 2-ի, և ալդպիսով իմանում «գործն» սկսելու տեղը: Եթէ «գործը» մէջ տեղից է՝ գուլթանը մէկ մի կողմից է վարում, մէկ միւս կողմից և քանի գնում՝ վարելով դէպի ավերն հեռանում. իսկ եթէ ավերիցն է՝ քանի գնում մօտենում է և վերջապէս հասնում մէջ տեղին:



Գուլթանի մաճը բռնող մաճկալը սովորաբար նստած է լինում չիմ-դաւրան (թ.) տախտակի վրայ, որի վրայ շինած է լինում

բռնելու տեղ, ծակ. երբ ակօս ձգելով հասնում է արտի ծայրը և գուլթանը հարկաւոր է հողից հանել՝ բաւական է, որ չիմ-դաւրանի ծակից շրջէ դէպի ձախ՝ իսկոյն գուլթանը դուրս է դալիս և կողքին քարչ գալով գնում մինչի միւս նոր ձգելիք ակօսը. այդ ժամանակամիջոցում մաճկալը սրբիչը (14) ձեռին մաքրում է գուլթանի «բուկը»:

Մաճկալը գուլթանի մաճին շատ քիչ անգամ է ձեռ տալիս, այն ևս ուղղութիւնը պահպանելու համար:

Մաճերից մէկը, որի վրայ հագցրած է լինում էշը (1) կոչւում է էգ մաճ 8. իսկ միւսը՝ որձ * (8). երկու մաճի տակին լինում է մի նեցուկ կամ կցուկ, որ կոչւում է իլմակ (թ.). իլմակի երկարութիւնից է կախուած լինում ակօսի լայնութիւնն ու նեղութիւնը. ակօսն ունենում է մօտ 1 արչ. լայնութիւն, 8—10 վերչ. խորութիւն:

Եթէ ցանոցին կամ հերկոցին արօրները լծում են լուսը բացուելու պէս՝ գուլթանցին գուլթանը լծում են Նուսու-ասողը (Արուսեակ) դուրս գալու պէս, հովին. որովհետև ցերկը շոքին այնքան գործ անել չի լինիլ, ուստի աւելի շատ ժամանակ են տալիս դրաստներին հանգստանալու:

Գուլթանը ծայրից չի կարելի լորխել լծին, ինչպէս արօրը, դրա համար լարմարեցրած է մի գործիք, որ կոչւում է գունէլ, որի ծայրը լորխում են քաշող առաջին զուգ եղների լծին:

Գունէլի մի անիւը (փետրով 3) բարձր է լինում, միւսը (բուղա թ. 4) ցածր. փետրովը գնում է ակօսի միջով, բուղէն թ. չվարած տեղի վրայով, այդ իսկ պատճառով էլ գունէլի սեւը հորիզոնական ուղղութեամբ մնալով՝ իւր վրայ է կրում գուլթանի շողէն (1):

Գուլթանի շողէն ջամբարէքով (թ.) (15) կապում են գունէլի ծակով (11) անցկացրած երկար երկաթին, որի ծայրից ձգում է գուլթանի երկար շղթան. այդ շղթայի վրայ շարում-լծում են 9—12 լուծք եղ ու գոմէշը:

Գուլթանին լծած 9—12 լուծք եղ ու գոմէշը ունին իրենց անունները—1 և 2 զուգը գունէլ, 3 և 4 զ. սարիղայիչ (թ.), 5 և 6 զ. դարաղայիչ (թ.), 7 և 8 զ. գղձի, 9 և 10 զ. փլաւձի, 11 և 12 զ. չալխաձի (թ.):

Ընդհանրապէս գունէլի և սարիղայիչի երկրորդ զուգերը լինում են գոմէշ լծած:

Իւրաքանչիւր 2 զուգը գրաստին կառավարում է մի հօտաղ. ամենից զժուարը գունէլ քշողի գործն է, որից կախուած է ակօս շատ կամ «քիչ վերցնելը», լծկանին զօր տալը կամ հանգիստ պահելը:

*) Նկարի մէջ սխալմամբ գրած է որ-ց.

հեղը, և որ գլխաւորն է գութանը քարին դէմ առած ժամանակ կոտորուելուց պահպանելը: Այդ պատճառով գոնէլը քշում են հասակաւոր մարդիկ. երկրորդ տեղն իւր դժուարութեամբ բռնում է չալխաճու գործը. երբ ակօսը վերջանալու մօտենում է, չալխաճին պէտք է այնպիսի կիսաշրջան կաղմել տայ 9—12 լուծք եղ ու գոմէշին, որ թէ պտույտը կաղմեն, թէ գութանը քաշեն, և թէ հերկի դիմացն եղած ցանած արտը չընկնին:

Գութանի շղթան, որ ձգուած է լինում 9 - 12 լուծք եղ ու գոմէշի միջով, անմիջապէս չի միանում նրանց լծերի հետ, այլ իւրաքանչիւր մի զոյգն առանձին փոկով միացած է լինում ընդհանուր շղթայի հետ, բացի չալխաճուց 2-րդ զ. գոնելից 1-ին զ.



Գութանի շղթայի տեղ հնումն աւելի գործածական է եղել երկար փոկ, մօտ 10 սաժէն երկարութեամբ, հիւսուած 30—40 բարակ սըրմեներից. բաց այժմ այդ գրեթէ հազուադիւր է:

Գութանի շղթան ձմեռը պահում են տան կամ մարազի սինին փաթաթած, տակից մինչև առաստաղը:

Այժմ Զաւախքում շատ քիչ ընտանիքներ կան, որ «գութանը տանից» լծեն. իւրաքանչիւր մեծ գիւղում 1—2 հատ:

Գութան լծելու համար մօտ են լինում 2—3—4 ընտանիք, մօտգամ դառնում: Նայելով, թէ մօտգամը քանի լուծք եղ ու գոմէշ է բերել՝ ըստ այնմ ստանում է իւր բաժինը: Սովորաբար «գութանը մի անգամ դառնալուն» ամեն մի զոյգ եղան հասնում է մի օրավար, գոմէշին $1\frac{1}{2}$ օրավար. իսկ գութանի վարձ՝ գութանի տիրոջը մաճկլի հետ՝ $2\frac{1}{2}$ օրավար: Իսկ եթէ «գութանը երկու անգամ դառաւ», դրա կրկնապատիկը:

Գութանով կարելի է հերկել միմիայն այն արտերը, որ քառանկիւնի ձև ունին և քարքարոտ չեն:

Գութանի էջը (1), թուրն (2) ու առատամը (3) լինում են սովորաբար կակալ փայտից, իսկ մաճերը կեչուց, տախտակները հասարակ փայտից:

Գութանը կոտորում է քարին դէմ առնելուց՝ բ կ ի ց, այսինքն թրի կամ ձեւիչի ծակի տեղից:

Ամեն ուստայ գութան չի կարող կապել (չինել). այդ մեծ, ըստ երևոյթին կոպիտ գործիքն այնքան նրբութիւններ ունի, որ հեշտ չէ կարգի դնելը: Գութանը կապելու համար վարձ վերցնում են մօտ 10 ռ. փող, կամ մի թե թե կով: Մի գութանն իւր բոլոր սարքով կարժենայ 50—60 ռ.:

Գութանի սարքերն են՝ ջամբարէկ (թ.), սրբիչ, խոփ և լուծ:

15) Զամբարէկ (թ.) նկ. II.

Զամբարէկն այն հաստ շղթան է, որով գութանը կոտից (6) կապում են գոնէլին. նա սովորական շղթայից խիստ հաստ է լինում և մէջտեղում ունի կեռ, լայն, տափակ երկաթից, որ կոռին անցկացնելու տեղն է:

14) Սրբիչ. նկ. II.

Սրբիչը մեծ մասամբ հոնի փայտից է լինում, ծայրը դրի նըման սրած, կամ դրածև երկաթ անցկացրած: Սրբիչով մաճկալը սրբում-թափում է գութանի «բուկը», երբ ակօսից հանած է լինում: Ը. Գոնէլ, նկ. II.

Գոնէլը ծառայում է նրա համար, որ գութանի գլուխը հանգչի նրա սեռի վրայ, այնտեղից գցեն գութանի շղթան: Շատ անգամ մի արտից միւս արտը տեղափոխուելիս գութանը բառնում են գոնէլին:

գ. Գութանը կապած գոնէլին, նկ. II.

Այս ձևում ցոյց է տրուած, թէ ինչպէս միացնում են գութանը գոնէլին:

18) Դոփ, նկ. II.

Գութանի խոփն անհամեմատ աւելի մեծ է քան արօրինը, և ուրիշ ձևով. արօրի խոփը փորում պատուում է գետինը, իսկ գութանի խոփը տակից կտրում հորիզոնական ձևով բարձրացնում է վեր:

Ս. Զղլա (թ.) նկ. III.

Զղլան արօրի և գութանի մէջ տեղն է բռնում թէ ձեռով, թէ մեծութեամբ և թէ գործածութեամբ:

Զղլան գործ են ածում հերկելու համար. նրան լծում են 4—6 լուծք եղ, կամ 1 զոյգ գոմէշ, 3—4 լուծք եղ և հերկում այնպիսի արտերը, որ պինդ են, արօրի համար անյարմար. քարքարոտ՝ գութանի համար անյարմար:

Սրա առատամի դմակը (8) կամ չաթալ (թ.) (ձեղքուած) է լինում, կամ խիստ լայն, որպէսզի ակօսը լայն բաց անէ:

Ջղլան ունի իրեն համար գունէլ դ, նկ. III, ինչպէս գութանը, միայն այն տարբերութեամբ, որ գութանի գունէլի անիւներն անհաւասար են, իսկ սրա փետրովներն (3) իրար հաւասար:

Սրա խոփն արօրի խոփի ձևն ունի, միայն աւելի հաստ է լինում և 2—3 վերջ. աւելի երկար:

Ջղլայի էջը, առատամբ, թուրը լինում են ամուր՝ կակալ փայտից, իսկ մաճը կեչուց:

Բ. Ջղլայի միւս տեսակը՝ գ. արօնայ կամ յարօնայ նկ. III.

Արօնան կամ յարօնան նոյն պաշտօնն է վարում ինչ որ արօրը, միայն արօնան աւելի բարդ է և աւելի խոր է փորում դեպինը, քան արօրը:

Արօնան, կարելի է ասել, այժմ բոլորովին գործածութիւնից ընկած է:

Արօնայի դմակը շատ անգամ չաթ ալ է լինում, երբեմն էլ ուղիղ. չաթալ դմակն (ինչպէս Ջղլայինը) ծառայում է լայն ակօս բաց անելու համար:

Արօնան լծում, գործածում են նոյն կերպով, ինչ կերպով արօրը, միայն սրա չորոցի շղթան կապում են բլից մի փոքր հեռու գտնուած նեցուկից:

Արօնայի խոփը, փայտը նոյնն են, ինչ որ արօրինն, և նոյն մեծութեամբ:

Յարօնայի միւս տեսակը տես նկ. I (սխալմամբ ընկած):

Գ. Ջղլայի գունէլ. նկ. III.

Ջղլայի գունէլը ծառայում է նրա համար, որ Ջղլան իր շղթայով հանգչի նրա սեւի վրայ (ինչպէս գութանը) և միացուի ջամբարէկով:

Ջղլայի գունէլի շղթէն մի ձողով է ամրացրած լինում սեւին:

Ջղլայի լծելու կարգն ու սարքը նոյնն են, ինչ որ գութանինը, միայն աւելի փոքր ծաւալով:

Ա. Փոցխ նկ. IV.

Փոցխը մի ահագին գործիք է, որ գործ է ածում ցանոցին արօրի փոխարէն այն արտերում, ուր արօրն անզօր է, այսինքն, երբ արտը խամ է, նոր հերկած մի անգամ գութանով և հողը դեռ հիւսում — պինդ է բոյսերի ու խոտերի հաղարաւոր արմատներով. այդ պատճառով լծում են փոցխին 4—6 լուծք եզ ու գոմէջ, մի քանի հողով կանգնում վրան և առամներով (2) փորում արտը, կամ ճիշտն ասած չանկուում խամ հերկի երեսը, հացահատիկները մի կերպ հողի տակ թաղում:

Վարելու փոցխի ատամները (2) լինում են կամ սոսկ փայտից

(կակալ) կամ թէ չէ նրանց վրայ հազցրած է լինում սուր, սեպաձև երկաթ:

Խամ հերկերը միայն մի անգամ (առաջին տարին) են վարում փոցխով, երկրորդ տարին վարում են արօրով, երբ արդէն հողի միջի արմատները փտած են լինում և հողը փափկացած:

Մի փոցխով մի օրում այնքան կարելի է վարել, որքան 3—4 արօրով միասին:

Փոցխի քաշողները (3) շարժական են. սալին բառնալիս, արտը տանելիս այդ քաշողները հանում են: Փոցխի փայտը լինում է պինդ և ծանր:

Բ. Տափան նկ. IV.

Յանոցին երբ արտը վարում — ցանում են, արտի երեսը խորդուբորդ, դերբուկներով ծածկուած է լինում. հարթելու, տափելու, իրենց լեզուով («տափնելու») համար գործ են ածում տափանը: Տափանին լծում են 2—3 լուծք եզ ու գոմէջ և սկսում հարթել: Տափանի վրայ անցկացրած, հիւսած են բազմաթիւ ձկուն և դիմացկուն ոտներ (ցախեր 7): Տափանի քաշողներն էլ նոյնն են, ինչ որ փոցխինը:

Տափանը որպէս զի ծանր լինի և աւելի լաւ հարթացնէ վարած արտի դերբուկները, բացի մաճկալից նրա վրայ կանգնում են և ուրիշ միջանի հողի, կամ բառնում են քարեր:

Գ. Տուփ նկ. IV.

Տուփի վրայ մի ցախ անցկացրած: Այդ ձևով հիւսում են միւս ցախերը:

Ամեն դիւղացի տափան (նոյնպէս և վարելու փոցխ) չէ ունենում. չունեցողը վերցնում է դրացուց առանց որ և է վար ձի:

Բ. ՀՆՁԵԼՈՒ և ՀԱԻԱՅԵԼՈՒ

Գ. Գերանդի (գերնդի Ժ.) նկ. X.

Գերանդիով հնձում են արտ, չալիր (թ.) (խոտատեղ), արօս. Գերանդին շատ ժամանակ չէ, ինչ մտել է գործածութեան մէջ. առաջ աւելի գործածականն եղել է մանգաղը:

Գերանդու առաւելութիւնն այն է մանգաղից, որ սա արտը հնձում է (կտրում է) տակից, որ և դարման աւելի շատ է դուրս գալիս, բաց միւս կողմից էլ որանը գետին թափուելիս բաւականին քանակութեամբ հացահատիկ է դուրս կորզում հատիկերից, իսկ մանգաղն ազատ է այս վերջին վնասից. սակայն սա էլ արտն երե-

մարդ մէկն առաջից, միւսն հետից բարձրացնում են երկու ձեռնե-
րով նետերի վրայ նստած փուլուլը, տանում եղըն զնելու տեղը:

Կէտերը լինում են հասարակ փայտից:

Է. Մանգաղ. նկ. X.

Մանգաղն (առանց սուր բերանի) այժմ խիստ քիչ գործածու-
թեան մէջ է. առաջ երբ խուրձ կապելը կար՝ դա խիստ գործածա-
կան է եղել:

Գ. ԿՐԵԼՈՒ

Ա. Կոռնի սայլ. նկ. IV.

Կոռնի սայլը գիւղացու ամենակարևոր գործիքն է. կոռնի
սայլը գործ են ածում ամեն ժամանակ թէ դաշտային և թէ տնային
պարագմուսներէրի ժամանակ. ցանոցին կոռնի սայլին բառնում են
սերմնացուն, կենդանիների կեր (պաշար) խուրձերով (սոտը *), շատ
անգամ արօրը. քաղցին նրա վրայ բառնում են բոլոր գործիքները,
կժով կամ տակառով ջուրը, իրենք էլ նստում վրան և գնում քաղը.
հերկոցին բառնում են գութանն իւր բոլոր սարքով (բացի գոնէ-
ւից), կալոցին հացը կալից կրում են տուն, բնաղոնը տանում ջրա-
ղաց, ալիւր, ջրաղացից բերում տուն. բացի այդ՝ նրա վրայ ամառը
նստում՝ ուխտ, հարսանիք, հրաւեր են գնում գիւղից գիւղ. նրանով
կրում են շինութեան համար անտառից փայտ, դաշտից քար, քրէհ
տանում զանազան տեղեր, կաղաւթանից աղ բերում, քաղաքը աթար,
փայտ, ալիւր, աղ և ուրիշ բաներ տանում ծախելու և ալլն:

Կոռնի սայլն այնքան կարևոր գործիք է գիւղացու համար,
որ չնայած նրա թանգ նստելուն՝ գրեթէ ամեն տուն ունի:

Երբ կոռնի սայլի վրայի բեռը շատ է լինում՝ նրան բացի
ամուլից լծում են մի զոյգ եղ էլ առաջից, որ կոչւում է չորոց
(հորիկ):

Կոռնի սայլն երբ գործածութեան մէջ չէ՝ արևից պահում են
չարտախի տակ, որ չփչանայ, իսկ անիւները տան բակում (նախա-
սենեակ):

Որպէս զի անիւներին խիստ միացրած սեռը հեշտութեամբ
պտուտ գալ բարձերի (14) տակ՝ գնացած ժամանակ սապոնում են,
որի համար միշտ պատրաստ քաշ արած է լինում սայլի ասեղի մօ-

*) Յանքի ժամանակ լծկանին չեն թողնում (վանաչն ընկնե-
լու) (նոր խոտ արածելու), որովհետև նոր բսած խոտը նրանց նի-
հարացնում է և թուլացնում:

տից սապոն լուղը (թ.) (20), մէջը սապոն ջրով լցրած, իւր թիա-
կով: Սապոնլուղը լինում է գոմէշի պոզից, բերանին փայտից շի-
նած կափարիչ:

Կոռնի սայլի տալը (թ.) (18), նրա համար է, որ սայլի
գլուխը բարձր մնայ և հեշտ լինի լծել:

Սայլի գլխից մինչև առջևի կոպը կոչւում է եզնոց. այդ եզ-
նոցը եզան կամ գոմէշի երկարութեան է լինում:

Սայլն ինչպէս և գութանն ամեն ուստայ չի կարող կապել,
պահանջում է բաւականին նրբութիւն:

Կոռնի սայլը շինում են իրենք գիւղացիները բացի անիւնե-
րից, որ առնում են քաղաքից պատրաստի:

Կոռնի սայլը շինում են հասարակ մայրի կամ եղենի փայտից.
բացի սեռից, անիւներից ու բարձերից, որոնք լինում են աւելի
ամուր և դիմացկուն փայտից:

Կոռնի սայլով գիւղացին կգնայ մի ժամում 3—4 վերստ, ոչ
աւել:

Բ. Սայլը լորխած լծին նկ. V.

Այս ձևում ցոյց է տուած, թէ ինչպէս են լորխում լուծը
փոկով, դրա նման և լորխում են արօրը կանուխից:

Որանի (օրնի ժ.) սայլ. նկ. IV.

Որանի սայլը շատ աւելի մեծ է, քան կոռնի սայլը. սրանով
հնձի ժամանակ խոտն ու վարսակը (ուլաֆ թ.) կրում են խոտատե-
ղից ու արօսից խոտնոցը, քաղցին ցորենը, գարին, հաճարը (գիւղ-
լիկ թ.) կտահատը կրում են արտերից կալը:

Սրան լծում են ընդհանրապէս երկու զոյգ եզ (ըստ մեծի մա-
